Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաջին դասարանի դասվար (20 դասաժամ), Հայոց պատմություն (7 դասաժամ), Համաշխարհային պատմություն (4 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմություն (2 դասաժամ), Հասարակագիտություն (2 դասաժամ), Կենսաբանություն (4 դասաժամ) , Ֆիզիկա (4 դասաժամ), Քիմիա (4 դասաժամ), ԹԳՀԳ (3 դասաժամ), Ինֆորմատիկա (2 դասաժամ), Կերպարվեստ (2 դասաժամ), Զինղեկ (0,5 դրույք), Իմ հայրենիքը (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղեր

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ.-ի նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. դեկտեմբերի 6-ին՝ ժամը 12:00-ին**, Որոտանի հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ. Սյունիքի մարզ, Սիսիանի համայնք, բնակավայր Որոտնավան: Տեղեկությունների համար զանգահարել 077883089 հեռախոսահամարով: